

ձնաւորութեանց, զբանն եւ զՈրդին ծնեալ ի հօրէ
 նախ քան զյաւիտեանս անախտաբար, եւ անժա-
 մանակապէս, ոչ յետոյ եւ ոչ կրտսեր, այլ յաւի-
 տեանական հօրէ՝ յաւիտենական Որդի, անժամա-
 նակ ծնողէ՝ անժամանակ ծնունդ, հանդուռնատիպ
 եւ հաւասար ամենայնիւ, քանզի ոչ էր Հայր եր-
 բեմն որ ոչ էր Որդի, այլ որպէս միշտ Հայրն Հայր
 եւ Որդին Որդի, եւ նոյն ի վախճան յաւիտեանցս
 ձնաւ մարմնով ի սուրբ կուսէն Մարիամայ, Աս-
 տուածն կատարեալ՝ նոյն ինքն եւ մարդ կատա-
 րեալ հոգևով, է- մոռ. է- մարմնով, անորոշելի
 մարդկութեամբ, եւ անթերի Աստուածութեամբ,
 էին մարդ յաւիտէ ի կնոջէ եւ եմուտ բնդ օրինօք՝
 ըստ Առաքելոյ. յանձն էառ եւ զամենայն կիրս
 մարդկային որ ինչ բնութեանն էր բաց ի մեղաց,
 ոչ ծառայելով իբրեւ զմեզ կրիցն բնականաց,
 այլ կիրքն բնութեանս ծառայէին նմա իբրեւ Աս-
 տուծոյ, յաղագս որոյ՝ եւ հաղորդիւր կամաւորացն,
 եւ ակամայքն խոյս տուեալ փախչէին ի նմանէ
 զարհուրեալ իբրեւ յԱստուծոյ: Եւ յետ ամաց
 երեսնից գայ ի յորդանան մկրտի ի Յովհաննէ, եւ
 վկայի յԱստուծոյ հօրէ, որդի սիրելի կուսածին
 մարմնովն, եւ սուրբ Հոգին աղաւնակերպ իջանի
 յայտնեալ զփառս Էակցին: Որով եւ վարի յա-
 նապատ փորձիլ ի սատանայէ, եւ յաղթէ նմա
 մարմնովն ազամային: Եւ նոյն հետայն ժողովէ
 զաշակերտան առնէ նշանս եւ զօրութիւնս բազումս
 հրաշս եւ զարմանալիս յոլովս: Ուստի եւ ի վախ-
 ճանի կամաւորութեամբ գայ ի չարչարանս եւ
 յանձն առնու զմահ խաչի, եւ մարդկապէս մեռանի
 ի վերայ նորա, յառնէ փառօք յաւուր երրորդի,
 եւ երեւի աշակերտաց պէսպէս արուեստիւք
 յաւուրս քառասուն, հաղորդելով բնդ հացիւ:
 Եւ յետ այնորիկ յանդիման աշակերտացն ինք-
 նիշխան զօրութեամբ համբառնի յերկինս, նովին
 մարմնովն որով ծնաւն՝ խաչեցաւ, մեռաւ եւ յա-